# *«ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԵՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ» (PURE-WATER) ԾՐԱԳԻՐ*

## ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ՁԵՌՆԱՐԿ

Երևան 2019 թ.

## Համագործակցության պայմանագիր՝ AID-111-A-17-00005

**Ծրագրի անվանումը** ՝ Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում

**Ֆինանսավորող**՝ Ամերիկայի միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ)

**Ծրագրի իրականացնող**՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ, «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ, ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն

*Սույն փաստաթուղթը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները/կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*

*Նախաբան*

Սույն օգտագործողի ձեռնարկը մշակվել է «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ» հասարակական կազմակերպության կողմից «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ-ի և Երևանի պետական համալսարանի «Էկոլոգիական իրավունքի» գիտաուսումնական կենտրոնի հետ համատեղ իրականացվող և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող ***«Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի*** շրջանակներում:

Այդ ուղեցույցը նախատեսված է բոլոր այն անձանց համար, ովքեր ՀՀ Բնապահպանության նախարարությանը կից՝ Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության միջոցով ցանկանում եմ մուտք գործել Ջրօգտագործման թույլտվությունների հայտերի ներկայացման առցանց հարթակ և լրացնել առցանց դիմում՝ համապատասխանաբար ստանալով առցանց պատասխաններ:

Ուղեցույցը մանրամասն նկարագրում է, թե ինչպես պետք է օգտագործողը մուտք գործի կայք և օգտվի առցանց հարթակից:

# Մուտք համակարգ

Օգտագործողը պետք է մուտք գործի http://wrma.am/wateruser հղումով, որտեղ լրացնելով **«Ծածկանունը»** և **«Գաղտնաբառը»** կարող է մուտք գործել համակարգ, եթե գրանցված է համակարգում:




Համակարգում գրանցված չլինելու դեպքում՝ պետք է անցնել ներքևում առկա «գրանցվել» հղումով, որտեղից կբացվի օգտագործողի գրանցման էջը:




- **Ծածկանուն** – Լրացվում է օգտագործողի ծածկանունը ***լատիներեն*** (անգլերեն) տառերով: Ծածկանունը համակարգում պետք է լինի եզակի՝ չկրկնվող: Կրկնության դեպքում, համակարգը կզգուշացնի՝ հետևյալ հաղորդագրությամբ. **Նման ծածկանուն արդեն գոյություն ունի:**
- **Գաղտնաբառ** - Լրացվում է ծածկագիրը **լատիներեն** (անգլերեն) տառերով: Ցանկալի է, որպեսզի գաղտնաբառը լինի բարդ՝ բաղկացած տառերից՝ մեծատառ և փոքրատառ, թվերից, սիմվոլներից:

- **Կրկնել գաղտնաբառը** - Եվս մեկ անգամ լրացվում է ծածկագիրը (կրկնվում է) ***լատիներեն*** (անգլերեն) տառերով *(հնարավոր սխալներից խուսափելու համար):*

Գրանցում կատարելու համար անհրաժեշտ է սեղմել **«Գրանցվել»** կոճակը այնուհետև համակարգը կգրանցի հայտատուին և ավտոմատ կերպով կտեղափոխի անձնական էջ՝ հայտատուի տվյալները բաժին:




Համակարգի գլխավոր էջի վերին աջ հատվածում առկա **«Ելք»** հղումով օգտագործողը կարող է դուրս գալ համակարգից (Sign Out):

Հայտատուի տվյալները բաժնում առկա են **2** ենթաբաժիններ.




1. **«Հայտատուի տվյալները»** սեղմելով կբացվեն համապատասխան դաշտերը, որտեղից ջրօգտագործողը պետք է լրացնի իր տվյալները:




Լրացվող դաշտերը (էջում *-ով նշված դաշտերի լրացումը պարտադիր է).

- **Իրավաբանական կարգավիճակ** - Լրացվում է իրավաբանական կարգավիճակը:
- **Անվանումը / անուն ազգանուն** – Լրացվում է օգտագործողի ազգանունը **հայերեն Unicode** տառերով կամ ***լատիներեն*** (անգլերեն):
- **Մարզ** - Լրացվում է մարզը:
- **Բնակավայր** - Լրացվում է մարզը:
- **Հասցե** – Լրացվում է հասցեն **հայերեն Unicode** տառերով կամ ***լատիներեն*** (անգլերեն):
- **Պետ ռեգիստրի կոդ** - Լրացվում է պետ ռեգիստրի կոդը:

- **Հարկային կոդ** - Լրացվում է հարկային կոդը:
- **Գործունեության տեսակ** - Լրացվում է գործունեության տեսակը **հայերեն Unicode** տառերով կամ ***լատիներեն*** (անգլերեն):
- **Հեռախոս 1** – Լրացվում է բջջային հեռախոսահամարը:
- **Հեռախոս 2** – Լրացվում է հավելյալ բջջային հեռախոսահամարը:
- **Էլ. փոստ**– Լրացվում է էլ. փոստի հասցեն:
- **Տնօրենի անուն ազգանուն** - Լրացվում է տնօրենի անուն ազգանունը **հայերեն Unicode** տառերով կամ ***լատիներեն*** (անգլերեն):
- **Այլ նշումներ** – Լրացվում է այլ նշումները **հայերեն Unicode** տառերով կամ ***լատիներեն*** (անգլերեն):

Տվյալները լրացնելուց հետո սեղմում ենք **«Ուղարկել»** կոճակը:

2. **«Հայտեր»** բաժինը բաղկացած է 2 մասից.




**«Նոր հայտ»,** որից կարելի է օգտվել միայն հայտատուի տվյալները (անձնական տվյալները) բաժինը լրացնելուց հետո, **«Հայտերի պատմություն»,** որտեղ ցուցադրվում են օգտագործողի տված հայտերի պատմությունները, որի վրա սեղմելով, կարելի է տեսնել հայտի մանրամասն նկարագիրը՝ հայտի տեսակը, ընտրված նպատակների ցանկը, կցված փաստաթղթերը նաև ներբեռնելու հնարավորությամբ: (տես ստորև նկարում)

# Հայտատուի հայտերը

Mulberry կոդ: **aaaaaa-2222-22sd-sdds** Copy Վերադառնալ իմ էջ Ելք

## Հայտի տեսակ

*Նոր թույլտվության ստացում*

## Ընտրված նպատակները

*Խմելու-կենցաղային*
*Գյուղատնտեսական*
*Ձկնաբուծական*

## Կցած փաստաթղթերը

| # | Փաստաթղթի անվանումը | Ֆայլը |
|---|---|---|
| 1 | Դիմում ուղղված լիազոր մարմնի ղեկավարին | Ներբեռնել |
| 2 | Անթերի լրացված դիմում-հայտի ձևը | Ներբեռնել |
| 3 | Ջրօգտագործողի ֆիզիկական անձի անձնագրի պատճենը | Ներբեռնել |
| 4 | Ջրօգտագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին եզրակացությունը` օրենքով նախատեսված դեպքերում | Ներբեռնել |
| 5 | Ջրօգտագործման համար հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը | Ներբեռնել |
| 6 | Նախկին ջրօգտագործման թույլտվությունը (նախկինում ջրօգտագործող լինելու դեպքում) | Ներբեռնել |
| 7 | Ջրային ռեսուրսներից ջրօգտագործողներին հատկացվող ջրառի չափաքանակների ու ռեժիմի որոշման կարգով հաստատված ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմաները | Ներբեռնել |
| 8 | Կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաները` հաշվարկված լիազոր մարմնի ղեկավարի հրամանով հաստատված «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկա» գերատեսչական ակտի համաձայն | Ներբեռնել |
| 9 | Տեղանքի հատակագիծը (սխեմա), որտեղ արտացոլվում է ջրօգտագործման կետի (կոորդինատական առանցքներ)՝ դրա հարևանությամբ գտնվող որևէ հայտնի օբյեկտի հետ կապը՝ հաստատված տեղական ինքնակառավարման մարմնի կողմից անհրաժեշտության դեպքում | Ներբեռնել |
| 10 | Կոմունալ-կենցաղային, բուժիչ և առողջապահական նպատակներով ջրօգտագործման դեպքում՝ համապատասխան փաստաթուղթ (եզրակացություն)՝ տրված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, առողջապահական տեսչական մարմնի մարզային փորձագիտական կենտրոնների կողմից | Ներբեռնել |
| 11 | Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-ժամանակացույց | Ներբեռնել |

**«Նոր հայտ»** կոճակը ակտիվացնելով բացվում է **«Հայտերի ներկայացում»** բաժինը: Այս բաժնում առկա են




1. Ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը, որը ներբեռնելով հայտատուն կարող է ծանոթանալ պահանջվող փասթաթղթերին:
2. Ջրօգտագործման թույլտվության հայտի ձևը, որը օգտագործողը ներբեռնում է, լրացնում և պահանջվող փաստաթղթերի հետ կցում համապատասխան դաշտում:

Ներքևում օգտագործողի համար առկա է երկու բաժին.

1. Ջրօգտագործման **նոր թույլտվություն ստացման** բաժինը, որի վրա սեղմելով բացվում է «Ընտրեք ջրօգտագործման նպատակը» ֆունկցիան:




Այստեղ օգտագործողը ընտրում է անհրաժեշտ թույլտվության նպատակը, և անցնում փաստաթղթերի ցանկի մենյու, որտեղ պետք է կցի համապատասխան ֆայլերը:

## ՆՈՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄ

## Ընտրեք ջրօգտագործման նպատակը

- [x] Խմելու-կենցաղային
- [x] Գյուղատնտեսական
- [ ] Արդյունաբերական
- [ ] Ձկնաբուծական
- [ ] Էներգետիկ

Ստորերկրյա ▾

- [ ] Մակերևութային

ՈՒՂԱՐԿԵԼ

**Ստորև կցվել ֆայլերը ընտրված նպատակին(ներին) համապատասխանաբար**

*** Դիմում ուղղված լիազոր մարմնի ղեկավարին**

Выберите файл Файл не выбран

**Կցել ֆայլ**

Ֆայլը պետք է լինի հետևյալ ֆորմատներից որևէ մեկով՝ jpg, png, doc, docx, xls, xlsx, pdf, zip, rar: Ֆայլի մաքսիմում չափը 5Մբ է:

*** Անթերի լրացված հայտի ձևը**

Выберите файл Файл не выбран

**Կցել ֆայլ**

Ֆայլը պետք է լինի հետևյալ ֆորմատներից որևէ մեկով՝ jpg, png, doc, docx, xls, xlsx, pdf, zip, rar: Ֆայլի մաքսիմում չափը 5Մբ է:

*** Ջրօգտագործողի ֆիզիկական անձի անձնագրի պատճենը**

Выберите файл Файл не выбран

**Կցել ֆայլ**

Ֆայլը պետք է լինի հետևյալ ֆորմատներից որևէ մեկով՝ jpg, png, doc, docx, xls, xlsx, pdf, zip, rar: Ֆայլի մաքսիմում չափը 5Մբ է:

**Ջրօգտագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին եզրակացությունը՝ օրենքով նախատեսված դեպքերում**

Выберите файл Файл не выбран

**Կցել ֆայլ**

Ֆայլը պետք է լինի հետևյալ ֆորմատներից որևէ մեկով՝ jpg, png, doc, docx, xls, xlsx, pdf, zip, rar: Ֆայլի մաքսիմում չափը 5Մբ է:

*** Ջրօգտագործման համար հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը**

Выберите файл Файл не выбран

**Կցել ֆայլ**

Ֆայլը պետք է լինի հետևյալ ֆորմատներից որևէ մեկով՝ jpg, png, doc, docx, xls, xlsx, pdf, zip, rar: Ֆայլի մաքսիմում չափը 5Մբ է:

**Ցամաքուրդային ջրաղբյուրի թողունակության և որակի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ՝ տրված այդ ջրհեռներն օգտագործող կազմակերպության կողմից (անհրաժեշտության դեպքում)**

Выберите файл Файл не выбран

**Կցել ֆայլ**

Ֆայլը պետք է լինի հետևյալ ֆորմատներից որևէ մեկով՝ jpg, png, doc, docx, xls, xlsx, pdf, zip, rar: Ֆայլի մաքսիմում չափը 5Մբ է:

**Յնարավոր սերվիտուտի և համապատասխան գույքից օգտվելու ձևի նկարագրությունը, սեփականատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը**

Выберите файл Файл не выбран

**Կցել ֆայլ**

Ֆայլը պետք է լինի հետևյալ ֆորմատներից որևէ մեկով՝ jpg, png, doc, docx, xls, xlsx, pdf, zip, rar: Ֆայլի մաքսիմում չափը 5Մբ է:

**Նախկին ջրօգտագործման թույլտվությունը (նախկինում ջրօգտագործող լինելու դեպքում)**

Выберите файл Файл не выбран

**Կցել ֆայլ**

Ֆայլը պետք է լինի հետևյալ ֆորմատներից որևէ մեկով՝ jpg, png, doc, docx, xls, xlsx, pdf, zip, rar: Ֆայլի մաքսիմում չափը 5Մբ է:

*** Ջրային ռեսուրսներից ջրօգտագործողներին հատկացվող ջրառի չափաքանակների ու ռեժիմի որոշման կարգով հաստատված ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմաները**

Выберите файл Файл не выбран

**Կցել ֆայլ**

Ֆայլը պետք է լինի հետևյալ ֆորմատներից որևէ մեկով՝ jpg, png, doc, docx, xls, xlsx, pdf, zip, rar: Ֆայլի մաքսիմում չափը 5Մբ է:

Լրացվող դաշտերը (էջում *-ով նշված դաշտերի լրացումը պարտադիր է).

- Ֆայլերը բեռնավորման համար անհրաժեշտ է սեղմել «**Browse**» կոճակը, այնուհետև ընտրելով ֆայլը՝ սեղմել **«Open»** կոճակը: Բեռնավորվող ֆայլերը կարող են ունենալ հատուկ ձևաչափերից մեկը՝ **jpg, png, doc, docx, xls, xlsx, pdf, zip, rar** և չպետք է գերազանցեն **5** ՄԲ-ն:

Ավարտին պետք է սեղմել **«Ուղարկել»** կոճակը և եթե ամեն բան լավ է ընթացել հայտատուին կտրամադրվի Mulberry կոդ որով նա կարող է հետևել իր դիմումի ընթացքին e-gov.am կայքում:

**2.** Ջրօգտագործման թույլտվության երկարաձգում կամ վերաձևակերպում բաժինը:




Լրացվող դաշտերը (էջում *-ով նշված դաշտերի լրացումը պարտադիր է).

Այստեղ ջրօգտագործողը կցում է իր դիմումը **(դիմումը կարող է գրվել ազատ ձևով)** և նախկին ջրօգտագործման թույլտվության փաստաթուղթը:

- Ֆայլերը բեռնավորման համար անհրաժեշտ է սեղմել «**Browse**» կոճակը, այնուհետև ընտրելով ֆայլը՝ սեղմել **«Open»** կոճակը: Բեռնավորվող ֆայլերը կարող են ունենալ հատուկ ձևաչափերից մեկը՝ **jpg, png, doc, docx, xls, xlsx, pdf, zip, rar** և չպետք է գերազանցեն **5** ՄԲ-ն:

Ավարտին պետք է սեղմել «Ուղարկել» կոճակը և եթե ամեն բան լավ է ընթացել հայտատուին կտրամադրվի Mulberry կոդ որով նա կարող է հետևել իր դիմումի ընթացքին e-gov.am կայքում: